

Թիւն կայ ցորեն հասցնել Ղարաբաղի ներքին զաւառները, Նախիջևանի և Զանգեզուրի մի քանի կողմերը, ուր ցորենի պահածութիւնն է նախատեսուած:

Անցեալ տարի այդ կողմերում արդէն ցորենի պահածութիւն կար, և դիւրական հասարակութիւններին շատ թանգ նստեց իրանց տարեկան պաշարի ձեռք բերելը: Ինչ կը լինի նոցա դուրս կերպով երևան կը գայ և այս տարի, երբ միւս բերքերն էլ առատ չեն, և ազգաբնակչութեան ձեռքը չօշափելի նիւթական միջոցներ չեն տալու:

Հանգամանքները և տեղական պայմանները այնպիսի են, որ դժուար է մի կտրական միջոց առաջարկել՝ օգնութիւն հասցնելու համար, մանաւանդ որ ուշ չէ, և քանի որ այդ կենսական միջոցները դեռ շատ չեն թանգացել, իսկ անտարբերութեան հետևանքը դուրսէն այնպիսի լինի, որ շուտով մենք ամենքս պէտք է լսենք և ակաշնատես լինենք, թէ ինչպէս պողաբեր կողմից զանազան կողմերում ժողովուրդը դուրսէն այնպիսի միջոցներ պահածութիւն, ինչպիսին է հացը:

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՅ

Օգոստոսի 29-ին

Ամսիս 7-ին Բարեգործական Ընկերութեան Շուշու ճիւղի ընդհանուր ժողով կայացաւ Այդ ժողովում պէտք է վճռվէին, ի միջի այլոց, օրինորդական արհեստագիտական ուսումնարան և գրադարան—ընկերացարան բանալու հարցերը: Ժողովը, ի նկատի ունենալով իր սուղ միջոցները, վճռեց բանալ գրադարան-ընկերացարան: Շատ ցաւով է, որ մի ընկերութիւն չունի այնքան միջոց, որ բանալ մի օրինորդական արհեստագիտական ուսումնարան, որը, ի հարկէ, աւելի օգտակար կը լինէր, քան թէ գրադարան-ընկերացարանը, որովհետեւ վերջինիցս արդէն մէկը ունենք:

Նոյն օրը սիրողների ներկայացում եղաւ Վահլիւն լի էր հանդիսականներով: Մօտ 150 բուրլի դուռ արդէնք գոյացաւ: Ներկայացումը բարեգործական նպատակով էր:

Շուշուում առհասարակ թղթախաղը բաւական տարածված է: Խաղում են թէ հարուստը և թէ աղքատը: Հարուստը խաղում է տներում կամ կուրտում, իսկ աղքատը՝ գինեւաններում: Այսպէս անցեալ օրերը երկու հոգի գինեւանում խաղալու միջոցին միմեանց հետ կուտում են:

Կաղաքը շատ անապուր է պահուում. կարծես մաքրութիւնը երկրորդական հոգա է, որի վրա շատ քիչ պէտք է ուշադրութիւն դարձնել...

Կուղ ամենահին, անդր-պատմական ժամանակներ իւրեքերում Առանց դուրս դալու ճիւղ դիտութեան սահմանները, այժմեան գիտականները վստահ կերպով հաստատում են, որ մարդկանց հասարակական կեանքը, անցնելով երկար տարիների ու շրջանների միջից, ունենալով ըսկզբում տարրական և ամենապարզ եղանակ, նոյնքան հին է, որպէս և ինքն մարդը: Ուրեմն, եթէ ուզում ենք ուսումնասիրել մարդու բարոյականութիւնը, սկսեալ նրա ամենահին, սաղմնաւոր դրութիւնից, մենք պէտք է նախ քննենք մարդկային ցեղի զարգացումը, պէտք է աշխատենք խորատուգլխի շատ հին ժամանակների մէջ և ճշգրտութեամբ դուրս բերել մեր նախորդների անդր-պատմական կեանքը, իր ամբողջ հոգեկան և բարոյական դոյներով: Բայց ինչպէս կարելի է թափանցել այդքան հեռուոր ժամանակների խորքերը, ինչպէս ծանօթանալ և ուսումնասիրել անդր-պատմական ժամանակների մարդուն, քննենք նրա հոգեկան բնաւորութիւնը՝ երբ նա, զբոսանալով ամենաստոր դարգացման աստիճանի վրա, մտնի իր ցեղակից անտրոպոլոգիներին, չէ թողել իրանից յետոյ ոչինչ մի նշոյլ կեանքի և գործունէութեան:

Այստեղ մեզ օգնութեան է հասնում դարձեալ գիտութիւնը: Բնագիտութեան միջոցով, որ պարագայում է լոկ մարդկային ցեղի գիտական հե-

ՆՆՐԻՆ ԼՈՒՐԻՆ

Օգոստոսի 30-ին, Թագաւոր կայսրի անուանակոչութեան օրը, մաղթանք կատարվեցաւ ռուսաց Սեմյոնարիայի եկեղեցում և հայոց վանքի մայր-եկեղեցում: Քաղաքը զարդարւած էր դրօշակներով, իսկ երեկոյան ճրագաւոյց կար:

Մեզ գրում են, որ ՍՈՒՐԱՄԻ հայոց հասարակութիւնը սաստիկ դժգոհ է Յովսէփ քահանայ Սեփեանցից, որը արդէն տաս տարի քահանայութիւն է անում Սուրբմուս Ժողովուրդը մի քանի անգամ դիմել է խնդրագրներով հոգևոր իշխանութեան, ինչոքեղով հեռացնել Յովսէփ քահանային: Սուրբմի հայոց հասարակութիւնը յոյս ունի, որ վերջապէս իրանց արդար բողոքը կը լսվի և հոգևոր իշխանութիւնը կը հեռացնէ Սուրբմից Աթլեանց քահանային:

ԹԻՖԼԻՍԻ Հաւաքար թաղի ս. Մինաս եկեղեցու երեքգլխան, Նազար Ղազարեանց, ինչպէս հաւատացնում են մեզ, իր վեցամեայ երեքգլխանութեան ժամանակամիջոցում դեռ ոչ մի անգամ հաշիւ չէ ներկայացրել և մինչև անգամ եկեղեցու շինութեան համար օժանդակութեան՝ կամաւոր նուիրատուութեամբ կօնսիտօրիակից տուած երկրորդ մասեանը, ինչպէս ինքն յայտնել է հաշատեաներին, կորցրել է: Այդ բանի վրա դարձնում ենք հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը:

ՂՈՒՐԱՄԻ մեզ գրում են, որ օգոստոսի 25-ին այդտեղի հիւանդանոցում մեռել է աւաղակապետ Միրզայի, որը Զիլի անուանված գիւղի մօտ կուր ժամանակ ծանր վերքեր էր ստացել, ուղեցել էր իր ընկեր խաչի օգնութեամբ անտառի խորքը փախչել, բայց այդ դիտաւորութիւնը նրան չաջողվելով, Միրզային բռնի է և վիրաւորված բերել է քաղաք, և այժմ հիւանդանոցում մեռել է իր ստացած վերքերից:

ՆՐԻՆԻՆ մեզ գրում են, որ շուտով կատարվելու են Նրեանում քաղաքային դումայի ձայնաւորների և քաղաքային ընտրութիւնները: Հարկատուների անոնների ցուցակը արդէն պատրաստ բաժանված է ժողովուրդին:

ՆՐԻՆԻՆ, օգոստոսի 24-ից մեզ գրում են հետեւեալ: Հեղու շարժի է արդէն, որ բաւական հով է անում, իսկ գիշերները նոյն իսկ ցուրտ է լինում: Նրկները ամպամած է, սակայն անձրև վաղուց է որ չէ եկել: Վերջին օրերս սաստիկ քամի է լինում երեկոյան դէմ և սարսափելի թող է բարձրանում փողոցներում: Գա, ինչպէս յայտնի է, շատ վնասակար է ընդհանրապէս, ոչ թէ միայն մարդկանց, բայց և բոյսերին և յատկապէս պտուղներին: Հացի գինը օրից օր բարձրանում է:

ՆՈՐ-ԲԱՍԱՋԷՏԻՑ մեզ գրում են: ՎԱՄԻՆ տեղ հացահատիկների հունձը սկսվել է. բերքը այս տարի շատ առատ է այստեղ. կարծես հէնց ինքն:

տաղօտութեամբ, կոչվում է անտրոպոլոգի (մարդաբանութիւն): Վերջին երեսուն տարիներում այդ գիտութիւնը մեծ առաջադիմութիւն կատարեց և իր զարգացումով անփոխարինելի ծառայութիւն արեց մարդկութեանը: Անտրոպոլոգիայի դուրս բերած նշանաւոր, հիմնական ճշգրտութիւններից մէկն էլ այն է, որ այժմեան գոյութիւն ունեցող ստոր դարգացման ու վայրենի ազգերը, իրանց կեանքով, իրանց բնաւորութեամբ ու հոգեկան յատկութիւններով, գլխաւորապէս ներկայացնում են անցած, հեռուոր դարերի մարդուն և նրա բարոյական հակումները:

Այս ճշմարտութիւնը անաղին ասպարէզ է բաց անում գիտական հետազոտողների առաջ՝ թէ մարդաբանական և թէ սօցիալական մեծամեծ խնդիրներ լուծելու ժամանակ: Այսպէս, օրինակ, անալիզով իմանալ թէ ինչպիսի բարոյականութեան ու վարքի յայտնի մարդիկ անդր-պատմական ժամանակներում, իրանց կեանքի հասարակ, նախնի դրութեան մէջ, այժմեան գիտնականները ուշադրութեամբ քննում, ուսումնասիրում են մեր ժամանակի վայրենի մարդկանց կեանքը, նրանց սովորութիւնները, բնատեկան և հասարակական բոլոր մարտերութիւնները: Նրկադները վրա բնապիտոյ մարդկային ստոր ցեղերի, վայրենիների կեանքը, նրանց մեղքաւորական տնօրգարփիւն միակ և ամենաճիշդ աղբիւրն է,

ընտրվում կամենում է վարձատրել խեղճ գիւղացուն իր անցած տարւայ կրած նեղութիւնների փոխարէն և առատ հունձի հետ տալիս է նրան լաւ եղանակ, որը անհրաժեշտ է դիւրացուն աւսմիջոցում:

Մեզ գրում են, որ օգոստոսի 14-ին Նոր-Բայադէտի Ս. Հռիփսիմեան օրիորդաց ուսումնարանի աշակերտուհիների ձեռագործների վիճակախաղը տեղի ունեցաւ: Այդ վիճակախաղից գոյացաւ դուռ արդէնք 76 բուրլ: Թղթակիցն սակայնում է թէ ցաւալի է, որ վաճառականների դատը մեծ մասամբ բացակայ էր վիճակախաղին:

Ներքալթի, օգոստոսի 30-ին, ինչպէս յայտնել էինք, սկսվեցաւ ներկայ սեղօնի օպերային առաջին ներկայացումը: Ներկայացումից առաջ, Նորին Մեծութեան Թագաւոր կայսրի անուանակոչութեան պատճառով ամբողջ խումբը երգեց ռուսաց ազգային հինը: Սյուսեան խաղացվեց Գլխակի «Знаешь ли Паря» օպերան, որը ընդհանրապէս բաւական թոյլ անցաւ:

«Մշակի» անցեալ № 98-ում Թիֆլիսի օպերային ներկայացումների մասին տպած լուրում մի սխալ է մտել: Տպված է. «Ներկ Թիֆլիսի քաղաքային թատրոնում սկսվեցան», իսկ պէտք է լինէր. «Այսօր Թիֆլիսի քաղաքային թատրոնում սկսվում են» և այլն:

Թիֆլիսի նահանգապետ պ. Զիսսերմանին չընտրված է Ս. Անայի առաջին կարգի չքանչանք, իսկ զլխաւոր կառավարչապետի դիւանատան փոխ-դիրեկտորին չընտրված է Ս. Ստանիսլաւի առաջին կարգի չքանչանք:

Կ. Պօլից այստեղ եկած մի հայ պատմում է, որ «Թիֆլիսցի կառավարութիւնը մանրակրկիտ ուշադրութիւն կը դարձնէ հայ լրագրաց վրայ: Բաւական է համարելով եղած քննչներն, այժմ մի նոր քննիչ վարձած է, մի հայ քահանայ կիլիկիոյ կողմերէն, որը հաւատն ուրանալով մասնատակաշուքիւն ընդունած է և Նյուն Էֆէնդի անուանւած, այժմ տպագրական տեսչութեան պաշտօն ստանձնած է հայերէն թերթերու քննութեան: Յայտնի է, որ Պօլսոյ հայերէն թերթերը, տպագրութիւնէն առաջ գրաքննիչի չեն խրկուր, այլ յետ տպագրութեան անոնց պարունակութիւնը կը թարգմանվի և ուղղակի ներքին գործոց նախարարութեան կը յանձնվի ամեն օր, մի օրինակ ալ արժենի պալատը. թուի թէ բաւական վստահութիւն չունեն հայ թարգմանչներու վրայ, նոյն իսկ Ալի Շահպազ Էֆէնդի (Նախկին Կարապետ Շահպազ Էֆէնդի) բաւական վստահութիւն չը ներշնչէր. առ այժմ հաւատարաց քահանայ մ'ալ փորձանք կը բերեն հայ լրագրութեան դըլխին»:

Ստացանք Վ.Ա.Գ.Ի.Կ.Ա.Վ.Ա.Ս.ԻՑ պ. Թաթոսեանից 20 բուրլի յօգուտ Բաֆֆիի դերեզմանի վրա գրվելի մահաբձանի: Պարոնը հաւաքել է այդ

որից կարելի է ստանալ առատ նիւթեր, առատ իրական փաստեր՝ անցեալ մարդկանց կեանքի և բարոյականութեան պատկերը ստեղծելու, ձեռկեպելու համար: Օգուտ քաղելով այդ աղբիւրից, Շ. Լէտուրնո մեծ աշխուրհեամը կարողանում է համարեալ և մեկնել անցած դարերի մարդու բարոյական և հոգեկան բոլոր յատկութիւնները:

Քննելով բարոյականութիւնը զարգացողական, էվոլյուցիայի տեսակէտից, Լետուրնո որոշում է նրա զարգացման աստիճանների մէջ՝ չորս դըլխաւոր դրութիւններ, չորս ֆազիսներ, որոնցից իւրաքանչիւրը ունի իր առանձին բնաւորութիւնը, որոշ և միւսներից տարբեր յատկութիւնը:

Առաջին զարգացողական ֆազիսը կոչվում է անտրոպոֆագիա (մարդակերութիւն), կամ անասնական, կենդանաբանական դրութիւն: Նրկորը կոչվում է վայրենական (sauvage), որի գլխաւոր յատկութիւնն է՝ ստրկութիւնը: Նրկորը ճիշտանում, արդէն հետզհետէ զարգացող կուլտուրայի ազդեցութեան տակ, մարդկանց նախնական վայրենութիւնը սկսում է փախկանալ և այդպիսով մարդկութիւնը ստեղծում է նոր կեանք ու բարոյականութիւն, որ կոչվում է բարբարոսական (barbare): Առաջվայ ստրկութիւնը քիչ-քիչ մեղմանալով դառնում է ճորտութիւն, կամ, ինչպէս ռուսերէն ասում են, крѣпостное состояние. վեր-

գումարը վաղիկակաւասարեալ մի քանի՝ անձեկից: Ընդամենը այդ նպատակով ստացանք մինչև այժմ 175 բուրլի:

Պ. Ֆրանսուա դը-Շոտարկէր ձեռնածոն, որը համ Թիֆլիսում, համ էլ Կօջորում մի քանի աղող ներկայացումներ է տուել վերջին օրերս, այժմ բաց է արել Թիֆլիսում, Գօլօլիսիի պրօսպեկտի վրա, իշխ. Օրբէլիանիի տանը, մի «Մագիական-Ֆիդիկական կարնէտ»: Կարնէտը բաց է ամեն օր, առաւօտեան 10 ժամից մինչև երեկոյան 11 ժամը:

ՆՐԻՆԻՆ հասած նամակներից տեղեկանում ենք, որ այս օրերս սաստիկ մեծ հեղեղ է եղել այդ քաղաքում: Վնասվել է գլխաւորապէս Շահար ասված թաղը: Այդ աղբիւր մանրամասնութիւնները դեռ ևս յայտնի չեն մեզ, նոյնպէս յայտնի չէ մեզ եղած վնասի չափը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈՒԼԹԻԿԻ ԳՈՐԾԵՐԸ

Կ. Պօլի «Արեւը» լրագրի մէջ տպված է հետեւեալ թղթակցութիւնը, խմբագրական այսպիսի ծանօթութեամբ՝ «Թղթակցները պէտք է չեղտաքրքրվեն գիւղական կեանքի ամեն երևոյթներով: Աղբիւր մը դանդաղ, ամեն տեղ, գիւղական կեանքն է, որը անտես չը պէտք է առնել»: Անա այդ թղթակցութիւնը, որը ուրախութեամբ առաջ ենք բերում: Հշատ մը այդինքն տնկուեցան, այս տարի, խուլթիկի մէջ: Որքերը թիւուր են ու գիւղի հիւսիսակողմի լեռներից կը ժպտի ու կը կանչկտայ: Այդտեսանի լեռը Սըբ Սարգիս կը կոչուր, և ինքը՝ Ս. Սարգիս, կըսեն տեղացիք, այս լեռան վրայ, իր ժայռերու մէջ կը բնակի: Խուլթիկցիները, հին ատեն ալ, այդի ունէին, բայց չարագործների աւերելն զանոնք չէին այդինքնը դեղի հարաւային արեւմտակողմը կիշան և 50 տարի է, որ խուլան են:

Նոր այդինքնը շահ մը բերելու են խուլթիկին. —չ, և կը ցաւիմ, որ՝ գեղի արհեստներն ալ բան մը չեն արժէր հիմա: Ատեն մը կար, որ խուլթիկցիները երկաթահանք կը բանէին, և դարբին՝ ինքը կը հայթայթէր իր ջուրայի երկաթը: Նրկաթահանքի գործը, մօտ 20 տարի է, որ մեռած է:

Խուլթիկի քաղաքացի (գամ), դեռ 10 տարի առաջ, իր բաց ու դրամուն հրապարակն ունէր Բաղէշի, Սղերտի, Խիզանի, Շիրվանի ու Բօհտանի մէջ, և քանի մը բաղէշցիներ խուլթիկի քաղաքացիներու վրայ միայն կը դարձնէին իրենց բուր գործ ու առուտորն: Այն ատեն, երբ ամեն մէկը քաղաքացու ոտնաման կը հաղէր, խուլթիկի դամբը ճիւղ կօչկի արդի փայտէ չիլիններու դերը կը խաղային մեր մէջ: Կուսնի հետ, ապրուստի համար, իր կկոցի գործն ունէր խուլթիկցին, տարին, մօտ 1,800 լիտր մանած կը հինէր ու կը գործէր: Կուսապործութիւնն ալ ին-

չապէս չորրորդ ֆազիսում, որի մէջ ապրում է այժմեան մարդկութիւնը, ստրկական և ճորտային դրութիւնները անհետանալով, տեղի են տըւել վարձկանութեանը, սալարիատին, որ, իսկապէս, ճորտարկած ստրկութիւն է: Բարոյականութեան այս վերջին ֆազիսում օրէնքով սաստիկ արգելված է մարդասպանութիւնը, բայց մարդիկ, այնու ամենայնիւ, սքանչանում և ոգեւորվում են, լսելով արհեստից պատերազմների նկարագրութիւնը: Խոնարհում, ներկայագրութիւն են տալիս պատերազմական հերոսի առջև: Բաղմակնութիւնը սկզբունքով արհամարհելի և անարարական է համարվում, չը նայելով, որ ամեն տեղ, պոռնկութիւնը աղատ գործնականօրէն ընդունված է: Մարդկանց միակ և ամենամեծ ձգտումն է՝ հարստանալ, ոսկի ու արծաթ ժողովել: Այս դրութիւնը կոչվում է շահաւորարկական, առևտրական (mercantile) բարոյականութիւն: Այս չորս դրութիւններից՝ այն է անասնական, վայրենական, բարբարոսական և առևտրական—որոնք աստիճանաբար զարգացմամբ կապված են իրար հետ, առաջին երկուսը պատկանում են անդր-պատմական ժամանակներին, իսկ վերջին երկուսը վերաբերում են պատմութեանը:

(Կը շարունակվի)

կամ է հիմա, և ամեն մէկը ամբողջանալով կողմէ չինել իր չափիկ ու պատանջն Նորայի:

Այն արհեստը, որ կը բանի դեռ խուլիկի մէջ, բրտաբրտանալ է: Խուլիկի բրտաբրտանալը, ամեն հոս ու հոն, մեր վիշապի մէջ ամեն շինելով կանցնեն, և երբեմն նոյն ինքն խուլիկ ու Ալալիկերտի կողմերը կը քնն իրենց դուրսն ու սափա, սեռիկ, մաթթաթ, չողթթի, խամալիկ, և այլն և այլն ամաններ: Բառեր կան, որ այս գեղը բրտաբրտանալ արհեստէն կառնէ իր անուհին, և խուլիկի քիւլիկ-դիկ կը հասկնան, որ արարիւնքն ամենքը բրտաբ քսել է: Պատ. Ս. Գալիկեան խուլիկի խուլի քիւլի կը մըռնէ և հին Բաղ-աւան մը կը համարի՝ այս գեղն: Եւ կը կարծեմ, որ խուլիկի թրջական գուլիկ ուր, և աւելի ճիշդ հայերէն խուլի քիւլի բառն է, և իրաւ որ, ամեն դիւն խուլի ու գողաւոր տեղի մը մէջ կիսայ այս գեղն:

Գալիկեան կայ խուլիկի մէջ. —այս, երկուսը դարձեալ մը, զոր Պարտի ընկերակիւնը բացած է: Խուլիկի բողբոջականները 10 տուն են, Լուսա-դուլականները 350 տուն և անդալոնց: Գլխի փոքրերը բողբոջականներու քովը կաթնով են ու կաղօթեն:

Բաղէնի ամբիւրեան միտնալը գորգորանալով մը կը վարուի իր շինական ծովերու հետ, և իր տարեկան այցելուիւնն առնել քոյր մը, եղբայր մը անայց չը թողոր, նոյնինքն անոնց աներու մէջ, անոնց թոնիքի քով: —Պէտք է յիշել հոս, որ Բաղէնի Առաջնորդական-Տեղապահը կը թելու համար միայն թնամական պտոյտի ելաւ հետու, և իր պտոյտը անհամար խուլիներն առաւ լիք դարձեր են գեղերու մէջ: Երկու տարի է, որ կրօնական տալիսը խուլիներն ու բողբոջական հոսանք մը կայ խուլիկի մէջ, և ասոր պատճառն այն քահանայի ձեռնադրութիւնն է, որի մէջ վաշխաւուն իր դերն ունեցաւ, ու կղերն իր սիմոնականութիւնն:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍՏՅՈՒՆ

Կ. Պօլիս, 23. օգոստոսի

Ներ այս թղթակցութիւն հրատարակուի, մեր Պատրիարքը կարելի է արդէն ընտրուած լինի, կամ յաջորդ օրն ընտրուի, եթէ վաղը համաձայնութիւն դրանայ Ազգ. Ժողովոյ Ատենապետի և Գաղաքական Ժողովոյ միջև: Սեպտեմբերի 2-ի ուրբաթ օրն Ազգ. Ժողով գումարելու և պատրիարքական ընտրութիւնը կատարելու կարծիք կայ, սակայն խուլի մը երեսփոխաններ կը փափաղին որ նախ վաւերացուին տասնէն աւելի նորընտիր երեսփոխաններն և ապա կատարուի պատրիարքական ընտրութիւնը: —Այս նոր վաւերացուցիչ երեսփոխաններու մէջ է նաև Սրտան-ձոնանց Գարեգին եպիսկոպոսը: Այս մտքով դիւր մը կը ստորագրուի երեսփոխաններու կողմանէ առ Ազգ. Ժողովոյ Ատենապետն յանձնելու:

Ի հարկէ հետաքրքրական է տեղեկանալ թէ ինչ եղաւ թէ և զքերէի պատասխանը, որու մասին արդէն ընդարձակ զբառ եմ Այդ պատասխանը խրկուեցաւ Պատրիարքարանէն, բայց դատական նախարարութեան կողմէն ձայն մը չեղաւ: Գաղաքական ժողովը այս լուրերէն իբր հաւանութիւն կը նկատէ և Պատրիարքական ընտրութիւնը կատարել տալ կուզէ: Բայց լուրերը հաւանութիւն է: Չեմ կարծեր: Մեզ այնպէս կը թուի թէ երբ պատրիարքական ընտրութիւնը կատարուի, այն ատեն կառավարութիւնը տեսնելով արդիւնքը, ըստ այնմ պիտի խօսի: Եթէ ընտրութիւնը անախորժ լինի՝ կառավարութիւնը այս խնդիրը նորէն կը յուզէ, եթէ ընտրութիւնը ձեռնարկէ և կառավարութեան խնդիրն ալ մեռած կը համարուի:

Այս հիման վրայ արդէն երեսփոխաններն համոզուելու ջանքեր կը լինան: Անձի խնդիրը նոյն վիճակին մէջն է: Նար-Պէյի և Բարթողիմէոսի կուսակցիցը դէմ առ դէմ են, իսկ ասոնց մէջէն Ալեքան Խորէն և Իզմիրեան Մատթէոս եպիսկոպոսներն: Անոնք որ ոչ Նար-Պէյի և ոչ Բարթողիմէոսի կուսակցիցներն են, աւելի Ալեքեանի կողմը կը հակին: Եղած հաշիւներէն այնպէս կը թուի թէ Նար-Պէյ 30—35 ձայն ապահով ունի, Բարթողիմէոս 25—30 ձայն, այնպէս որ մօտաւորապէս 60—65 ձայն ասոնցն են, իսկ մնացեալ 40 ձայնը ցրուած է: Թէ Նար-Պէյականներն և Բարթողիմէոսականներն 20 ձայնի չափ միանան այս ցրուեալներուն, այն ատեն կամ Ալեքեան կամ Իզմիրեան—աւելի հաւանական առաջինը կը ընտրուի: Մեզ այնպէս կը թուի թէ առաջին ընտրութեան

արդիւնքը չը դրանալ և կը մնայ յաջորդ նստին երկու ամենէն աւելի համամտական ըուէ առնողներու վրայ քուէարկութիւն ընել:

Բայց ինչպէս գիտէք այս միջոցին աւելի ուշադրութիւն կը դրաւ պապին կոնգալը քան ուրիշ և և է խնդիր: «Արեւել» հրատարակեց մի շարք յօդուածներ, որք ջերմ ընդունելութիւն գտան. այդ յօդուածները շարունակելի էին բայց տպագրական տեսչութիւնը արգելեց անոնց հրատարակութիւնն այնպէս որ այսօր վերջին յօդուածն եղաւ, թէպէտես ներքին չարտահանելիք գրուած: Աղաբեան Պատրիարք կարող եղած է ազդեցութիւն, բանցնել և արգելք ձեռք բերել եղած հրատարակութեանց դէմ:

Բայց միւս կողմանէ այդ շրջաբերականը վատ տպագրութիւն գործած է արքունի պալատին մէջ: Պապը ինքնագլուխ կերպով, իբր թէ ինքն ալ թիւրքիոյ վեհապետը կրօնափոխութեան կը հրաւիրէ ամբողջ ժողովուրդ մը—ժողովուրդ մը որ Թիւրքիոյ կենսական տարեքննիքէ մին է—առանց վեհապետին կամքն իմանալու, առանց ներքին խառն յանձն առնելու պիտաւու համար թէ ինչ աստիճան կը համապատասխանէ այսպիսի կրօնափոխութիւն մը երկրին քաղաքական շահերուն:

Ասկէ դատ պապին խոստումը «աշխարհական բարեփոխում» համար զայրոյթ պատճառած է պալատին մէջ, վստահ զի աշխարհական բարեփոխում միշտ կառավարութեան վնասակար են:

Այսպիսի տեսութիւններով ոտնկալութիւնը հրաման ստացաւ ձերբակալել այդ շրջաբերականին տպագրուած բոլոր օրինակներն: Այս հրամաններն սիրտ առած երեսփոխաններն սկսան ցոյցեր ընել շրջաբերականի դէմ: Կիրակի օր օգոստոսի 21-ին, Պօլսոյ ամենէն կարեւոր թաղերէն միոյն մէջ—Սամաթիա—ուր տաք գլուխ է ժողովուրդը, յետ աւարտման ժամըրկութեան խարոյկ մը կը պատրաստուի եկեղեցոյ բակին մէջ, ժողովուրդը կը խռովի: Նորա շուրջ և աղապին երեսփոխան պ. Տիրան Նաղարեան, որ եռանդոտ, գործունեայ երիտասարդ մէ—չափ կրակոտ սրբորով ու գլխով, կանուտ պապական կոնգալի շրջաբերականին և ջղուտ ճառ մը խօսելով կը նետէ կրակին մէջ այդ տեսլի բազմաթիւ օրինակները գոչելով:

«Այդ խարոյկին վրայ պապականութիւնը այրեց թիւրաւոր ամենինքն, այդպիսի դաւանութիւն մը կը հրաւիրէ դմեզ այժմ ուրանալ մեր դարաւոր եկեղեցին և միանալ հաւատալիչներու ժառանգներուն, այդ խարոյկի վրայ կայրելը այժմ մինչ ալ այդ մեղապարտ շրջաբերականը և զայս ըսելով կայրէ ինչ որ ձեռքը ունի շրջաբերականի օրինակներ—ու ժողովուրդը ջերմ ծափահարութիւններով կը պսակէ այս անվտանգ ասպետական քաջութիւնը:

Այս խնդիրները ցաւք կը տեսնենք, վստահ զի այդպիսի կոնգալներով ոչ մէնք կաթօլիկ կը լինենք, ոչ մեր եկեղեցին կը շարժի, բայց ի դուր տեղը ասեղութիւնը կը բողբոջի մի և նոյն ազգի պատկանող դաւաններու միջև: Այդ կոնգալը զոք-բաղդութիւն մը եղաւ, վստահ զի ինքեքը բողբոջուեցան, ասեղութիւնը վերադառնալու սկսաւ արժաւորել: Երբեք թէ Աղաբեան Պատրիարք հակահաւանանց հետ հաշտութիւն դրացնելու համար այնպիսի պայմաններ յանձն առած է, որք դիւրեկան չեն եղած պապին, բայց Աղաբեան Պատրիարք խոստացած է պապին թէ այս պայմաններով կառելի է նաև «հերձուածողներն» ալ ի միութիւն հրաւիրել: Երբ պատմուի նաև թէ Ֆերրանեան եպիսկոպոս խոստացած է պապին յանուն Աղաբեանի «վերադարձ» ի քաթօլիկութիւն 150,000 լուսաւորչականներուն:

Այսպիսի երազներով է արդեօք որ Աղաբեան Պատրիարք այդ դժբաղդ կոնգալը բերել տուաւ: Ո՞ր դիւտ գոցէ—և շատ հաւանական է—որ հայ հոռմէական կղերիկն շատ նպատակայարար լինին այն ամեն ատեղութիւններն որք կը ծագին հայոց մէջ:

Այս դժբաղդ խնդիրն առ այժմ վերջացած կը համարուի. այլ ևս լրագիր հրատարակութիւն չեն ընել, և պատրիարքական խնդիրը կուգայ մեր բոլոր ուշադրութիւնը գրաւել:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐՈՐ

—Կ. Պօլսի լրագիրներէ մէջ կարդում ենք, «Սուլթանի գահակալութեան 12-րդ տարեդարձի առթիւ Երուսաղէմէ Պատրիարք Թարութիւն սըր-

բազան և Պօլսոյ պատրիարքական տեղապահ Սիմոն արքեպիսկոպոս արքունի պալատն երթալով յանուն հայոց ազգին շնորհաւորութիւններ արին կայսեր, նոր սենեկապետ հաճի Ալի-պէյի միջոցաւ»:

—Լուրեր են տարածուել Եւրոպայի այլ և այլ շրջաններում, որ Կորուրեան իշխանը դիտաւորութիւն ունի պսակել Մարիա-Լուիզա Պարմի իշխանուհու հետ: Իշխանուհին 18 տարեկան է և Պարմեան Բոլքրո իշխանի տասներորդ աղջիկն է:

—Լրագիրները հաղորդում են, որ խալկական միջնաբերդ Նիւսպի մօտ ժամանակներում գնալու է Բերլին, որտեղ կայանալու է դիւանագետների ժողովը:

—Լուր կայ որ գերեզման Բուլանիէ ուղևորվելու է Գերմանիա: Իսկ Համբուրգից հեռագրում են «Köln. Zeitung» լրագրին, որ Բուլանիէի հետ ծանօթ անձինք արդէն տեսել են նրան այս օրերս Համբուրգի երկաթուղային կայարանում:

—Գերլինի «Պետական Համբուրգերի» մէջ արդէն պաշտօնապէս յայտնված է, որ գերմանական կայսրի քոյրը, իշխանուհի Սօֆիան, նշանված է յունաց թագաժառանգի հետ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍՏՈՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 28 օգոստոսի Նիժնեգորոքեան տօնաւաճառային մասնաժողովին առաջարկվեցաւ տօնաւաճառային վաճառականութեան հետեւալ յայտարարութիւնը: Հիւրընդ ստորագրեալները, կայսերութեան զանազան շրջաններէ առևտրա-արդիւնաբերական գործունէութեան ներկայացուցիչները, դիմում են Նիժնեգորոքեան տօնաւաճառային մասնաժողովին մի յայտարարութեամբ՝ ռուսաց արդիւնաբերութեան և առևտրի ամենանշանաւոր և ստիպողական կարիքներէ և պահանջներէ մասին Գեռ. և անցեալ տարի, երբ ֆինանսներն պ. միջնաբերդ այցելեց Նիժնեգորոքեան տօնաւաճառը, համայն ռուսաց ժողովւած վաճառականութիւնը, մատնացոյց անելով մաքսային սակագնի (տարիֆի) ընդհանուր վերադննդութեան անհրաժեշտութեան վրայ, միջնորդում էր այդ աշխատանքը կատարելու 1868 թւականի օրինակի համեմատ, մասնակցութեամբ արդիւնաբերութեան և առևտրի ներկայացուցիչների, որոնք գործնականապէս ծանօթ են երկրի արդիւնաբերական գործունէութեան պայմաններին հետ: Ֆինանսների պ. միջնաբերդ բարեյոժար պատասխանը, որի մէջ այն միտքն էր յայտնված, թէ արդիւնաբերութեան և առևտրի ներկայացուցիչների մասնակցութեամբ միայն հնարաւոր է կառավարելու բաւարար մաքսային սակագնի մշակումը, ապահովեց ռուսաց արդիւնաբերողներին յոյսերը՝ անհրաժեշտ մաքսային ռեֆորմները աշխատանքը իրագործելու մասին: Սակայն, հերթին սպասող տնտեսական հարցերի առաւտութեան պատճառով, սակագնի վերադննդութիւնը ուշացաւ: Այն ինչ այժմ նկատվող մութնալայնի կուրսի թանկանալու ժամանակ, սակագնի առանձին յօդուածներին վրայ մաքսահարկի անհաւասարաչափութիւնը առաւել և առաւել զգալի է դառնում, վնասելով աղաքային արդիւնքների զարգացման համար կառավարութեան ձեռք առած միջոցներին: Ի նկատի առնելով այդ, մասնավաճառում հաւաքված արդիւնաբերողները և առևտրականները խնդրում են մասնաժողովին դիմել միջնորդութեամբ ֆինանսների միջնաբերդին կարելոյն չափ շուտով սկսելու մաքսային սակագնի ընդհանուր վերադննդութեան վերաբերալ աշխատանքները: Մաքսային հարցի հետ անմիջական կապ ունի առևտրական պայմանագիրների և դաշնագրիներէ հարցը: Որչափ սակագիրը օգնում է ներքին արդիւնաբերութեան զարգացմանը, նոյնչափ օտար պետութիւնների հետ կապած պայմանագիրները և դաշնագրիները նպաստում են մեր ապրանքների արտահանութեան զեպի օտար վաճառանոցները: Այն ինչ այժմ գործութիւն ունեցող դաշնագրիները և պայմանագրիները ամենին չեն համապատասխանում մեզ աղելված պահանջներին: Բաւականանալով ընդհանուր որոշումներով, որոնք օգուտ տալով օտար առևտրին և ծովագնացութեանը ռուսաց հողերում, ամենին չեն հնչեցնում ռուսաց առևտրի զարգացումը օտար պետութիւններում: Շատ ցանկալի է այդ դաշնագրիներին վերաբերութիւնը պայմանագրական յարաբերութիւններին այնպիսի

տրամադրութեամբ, որպէս զի ապագայում մեր տնտեսական յարաբերութիւնները օտար պետութիւնների հետ հիմնվելն ոչ թէ տեսական, այլ առևտրա-արդիւնաբերական շահերի գործնական փոխադարձութեան վրայ: Առևտրական պայմանագիրների և դաշնագրիների պատշաճաւոր կարգադրութեամբ, ի հարկէ, շատ կը հնչեանար մեր արտահանվող առևտրի զարգացումը: Արտահանութեան այդ մեծանալը կը կատարվի եթէ ոչ ամբողջապէս, գոնէ առաւելապէս դիւրանտեսական արտադրութիւնների բաժնում: Իսկ ինչ որ վերաբերում է մասնաֆակտուրային գործուածների երկրի համար ամենաշահաւէտ արտահանութեանը, ուր գլխաւոր արժողութիւնը ներկայացնում է մշակման վրայ գործադրած ժողովրդական աշխատանքը, զրանց արտահանութիւնը սաստիկ դժուարանում է արդիւնաբերութեան համար պահանջվող նիւթերի վրայ դրված մաքսահարկերի պատճառով: Արտահանութեան ժամանակ մեր մասնաֆակտուրային արդիւնաբերութիւնը չափազանց դժուարացնում է օտար արդիւնաբերական ձեռնարկութիւններին մրցումը, որոնք արդիւնաբերական համար բոլոր անհրաժեշտ նիւթեր ստանում են կամ բողբոջին անմաքս (Անգլիա), կամ շատ աննշան մաքսահարկով (Գերմանիա), մեզ մօտ շատ զարգացած բամբակէ արդիւնաբերութիւնը, որի գործուածները մեծ կատարելութեան են հասել, բամբակից առնվող մաքսահարկի պատճառով հանդիպում է մեծ արգելքի օտար գործուածներին հետ աշխարհներում: Ինչպէս բամբակէ մաքսահարկը էապէս անհրաժեշտ է համարվում, ապահովելով բամբակագործութեան անաշխարհութիւնը Ռուսաստանում և այդպիսով պաշտպանելով մեր առևտրական բաւանալ աւելուող կրկնավաճառանոցի օտարներին բամբակի համար: Աշակվող արդիւնաբերութիւնների համար պահանջվող նիւթերի վրայ դրված մաքսահարկի ոչնչացնելը կամ պակասեցնելը, չը հնչեցնանալով արտահանվող ապրանքների առևտուրը, կը մնանկայնէ այժմ երկրում գոյութիւն ունեցող արդիւնաբերական ձեռնարկութիւնները, որոնք նշանաւոր չափ են տալիս ժողովրդական աշխատանքին: Մեր գործուածները մեծ քանակութեամբ օտար վաճառանոցները կարելի է տանել միայն այն դէպքում, երբ մշակված ապրանքների մաքսահարկը կը վերադարձնվի նիւթեր արտադրելու համար պահանջվող մաքսահարկի չափով: Մաքսի վերադարձը ոչինչ վնաս չի պատճառի պետական զանաւարման, մաքսերը կը վերադարձնվեն արտահանման վաճառանոցների ծախելու համար ուղարկվող արդիւնքների աւելա-ցածներէ: Բայց եթէ այդ միջոցի գործադրութիւնը չի աւելացնի մաքսային եկամուտը, մշակվող արդիւնաբերութեան արտադրութեան զարգացումը, ժողովրդական աշխատանքի եկամուտները աւելացնելով, կը բարձրէ պետական եկամուտների ուրիշ աղբիւրները: Ի նկատի ունենալով մաքսահարկի վերադարձնելու մեծ նշանակութիւնը և արդիւնաբերութեան զարգացումը, նոյնպէս ի ներկատի ունենալով առհասարակ պետական շահերը,—տօնավաճառում հաւաքված առևտրա-արդիւնաբերական գործունէութեան ներկայացուցիչները խնդրում են մասնաժողովին միջնորդել ֆինանսների միջնաբերդ մօտ այդ հարցին կարելոյն չափ շուտապիսով վճիռ տալու համար: Որպէս ցանկալի է երկրի առևտրական արդիւնաբերութեան համար նրա գործուածներին արտահանութիւնը օտար վաճառանոցները, անկախված առաւել ևս մեծ նշանակութիւն ունի պահպանել ազգային ոչ-բարավթիւ ներքին վաճառանոցները: Մինչև այժմ Սիբիրն էր մեր մշակված արդիւնաբերութեան սպառողը. իսկ այժմ Ասիական արած ծանուցումը երևում է, որ նա թոյլութիւն է ձեռք բերել 5 տարով իր ապրանքները անմաքս Սիբիր ուղարկել Նիսիէյի միջով. եթէ այդ հնարած լուր չէ, այդ հանգամանքը սաստիկ կը պակասեցնէ, և շատ կարելի է կատարելապէս կոչնչացնէ ռուսաց ապրանքների արտահանութիւնը զեպի Սիբիրի վաճառանոցները: Օտար ապրանքների անշարժկաւան տրանզիտը մեծ վնաս էր հասցնում մեր մշակվող արդիւնաբերութեանը, լցնելով օտարերկրեայ ապրանքներով ոչ միայն Պարսկաստանի և ասիական Թիւրքիայի վաճառանոցները, բայց կոնտրաբանդա ապրանք մատակարարելով մեր անդրկովկասեան և միջին-ասիական երկիրներին. իսկ անգլիական ապրանքներ Սիբիր անմաքս ներմուծումը անհամեմատ աւելի մեծ վնասներ կը տայ, քան անդրկովկաս

սեան տրանզիտը: Հարցը ոչ թէ օտար ապրանքները անմաքս անցկացնելն է մեր երկրներին միջով, այլ մեր շրջաններից մէկը վրա ուստաց իրաւունքները մի մասի օտարներին զիջանքն է: Զը նայելով ծովային ճանապարհի դժուարութեան վրա դէպի Նիւսէի բերանը, անկասկած է, որ այդ ճանապարհով անգլիական ապրանքների անմաքս ուղարկելու ժամանակ, մեր առևտրի անցյալից լի մրցողներ կը դառնան, իսկ մեր ապրանքները համար կը մնայ ցամաքային ճանապարհը, որի շնորհով Սիբիրի անտեսական ապագան և առևտրական դարձացումը կընկնեն Անգլիայի աղջկացութեան տակ: Մի և նոյն ժամանակ, ում յայտնի է անգլիացիների ընդունակութիւնը ամուր պահել իրանց ձեռք բերածը: Զերմուսանդուրթեամբ պաշտպանելով սեփական առևտրի շահերը, անգլիացիներն Սիբիրում թողնելը անուղղելի դառն սխալ է թուում մեզ ոչ միայն անտեսական, այլ և քաղաքական տեսակէտից: Ի նկատի առնելով վերև բացատրված հարցի մեծ նշանակութիւնը, մենք խնդրում ենք նոյնպէս մասնաժողովից միջնորդել Ֆինլանդիայի պ. միւնիստրի մօտ չը թող տալ անգլիացիներին խաղաղ ճանապարհով կտրել Ռուսաստանից Սիբիր: 116 ստորագրութիւններ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 29 օգոստոսի: Բարձրագոյն ճաշին նիստով տարադրուած, շաբաթ օրը հրաւիրված էին՝ ազնուականութեան առաջնորդը, զէմստվօի վարչութիւնները նախագահները և քաղաքագլուխը: Ներկայիս այդուհամ, պալատի առջև, լուսաւորութիւն կար և հրախաղութիւն, որոնց վրա Նոյն Մեծութիւնները բարեհաճեցին նայել պալատի պատուանդանից: Նրա վառվեցաւ դէկորացիան Թագաւորի, Թագուհու և Թագաժառանգի երեք վէնդէններով և չորս կողմը օղբ բարձրացան փամփուշտները, ժողովեալ բազմաթիւ ժողովրդի միջից լսվեցաւ միահամուռ, խլացնող շուրջի՝ ձայնը: Հրախաղութեան վերջանալուց յետոյ, Նոյն Մեծութիւնները հեռացան պատուանդանից, բայց յետոյ չը դադարող շուրջի՝ պատճառով կրկին մօտեցան պատուանդանի և Թագաւորը ուղորմածաբար պատասխանում էր ժողովրդի ողջոյնին: «Нов. Время» լրագրի խօսքերով, Ֆինլանդիայի միւնիստրութիւնը թող տուէր սեպտեմբերի կէսին զինեղործարանների ժողով կազմել կիէվում: Ժողովի նպատակը գիւղատնտեսական ցըրահանութեան հարցի ըննադատութիւնն է:

ԽԱՐԱՐՈՎԿԱ, 29 օգոստոսի: Օգոստոսի 11-ին երկրաշարժ կար Ամուրի ընթացքով, 400 վերստ տարածութեան վրա:

ՏՕՄՍԿ, 29 օգոստոսի: Դասախօսութիւնները համալսարանում մտադրութիւն կայ սկսել սեպտեմբերի 1-ին: 64 ուսանողներ են ընդունված:

մեծամասնութիւնը սեմինարիական են կազմում: Հաբաթ օր բացվեցաւ մասնաւոր նուիրաբերութեամբ կառուցված ուսանողների համար միասին բնակվելու տունը:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 29 օգոստոսի: Հաբաթ օր, չը հաւաքված տուրքերի դէպարտամենտի գրեկտօրի նախագահութեամբ, սկսված է խորհրդակցութիւնը գիւղատնտեսական ցըրահանութիւնը պաշտպանելու միջոցների մասին: Մասնակցում են՝ Պէնկա-յի, Սարատովի, Սամարայի, Ռիպանի և Օրէն-բուրգի նահանգներից եկած ներկայացուցիչները:

ԲԱՐՈՒ, 29 օգոստոսի: Ուրբաթ գիշերը Բալախանում վառվեցաւ մազուտի լիճը, այրվում է մօտ 30,000 պուլ Նաւի պարունակող ամբարը: Հրդեհները շարունակվում էին դեռ երէկ:

ԹԵՀՐԱՆ, 29 օգոստոսի: (Վէյտերի գործակալութեան հեռագիր): Բրիտանական գործակալատը Մէլիթեում ծանուցանում է, որ իշակ-խանը արշաւում է Գարալի վրա, ուր գտնվում է էմիրը, որը փոսնաւոր կերպով հիւանդացի է:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 29 օգոստոսի: Կիրակի առաւօտ Նոյն Վայսերական Մեծութիւնները Թագաւոր կայսրը և Թագուհի կայսրուհին բարեհաճեցին մեկնել Նիստովեդարդից, չը դադարող շուրջի: Նրանց յետոյ ժամանեցին Ալմազ գիւղը, ուր կեկեցու մօտ գիւղատնտեսականութիւնը խաչով և խաչվառներով: Ալմազայից Նոյն Մեծութիւնները գնացին Մէլիթե, ուր անտառում նախաձեռնի էր պատրաստված: Նախաձեռնից յետոյ Նոյն Մեծութիւնները ուղևորվեցան դէպի Նովայա-Պրադա: Աման չընդ կերպով դարձրված էր և բազմաթիւ ժողովուրդ սքանչացմամբ ողջունում էր Նոյն Մեծութիւններին: Պալատի բակում գտնվում էին տեղական ազնուականութիւնը և զէմստվօի ու քաղաքային վարչութեան ներկայացուցիչները: Ալմազայից քաղաքից, Նովայա-Պրադայի դէմստվօի, ազնուականութեան և աւանի կողմից մատուցին Նոյն Մեծութիւններին աղ ու հաց, իսկ զէմստվօի վարչութեան նախագահը ծաղիկների մի փունջ մատուցեց Թագուհուն: Մօսկվայի գիւղատնտեսական շրջանի գործերի հրամանատար գեներալ-ադիւտանտ Բրէվէր-դէ-Վազարդի պետական խորհրդի անդամ է նշանակված:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 31 օգոստոսի: Հրատարակված են՝ Սպանիայի հետ առևտրական դաշնագիրը և կազմելի քաղաքային լոմբարդի կանոնադրութիւնը:

ՍՕՖԻԱ, 31 օգոստոսի: Երբ Բիզով իր պաշտպանողական ճառի մէջ ասեց, որ Կիւրուքիան իշխանը պէտք է թողնէ Բուլղարիան, ներկայ գրեմով ճառարարութիւնը թողաքեց օղբ ծափահարութիւններով, որի հետևանքն այն եղաւ, որ պօլիցիան անմիջապէս հեռացրեց ճառարարութիւնը նիստի դահլիճից:

Խաղաղիւր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

ԿԵՕԼԵՐԵԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԶՈՒՐ

անփոխարինելի միջոց սեփական ճնշված օդը օգտագնելու և թարմացնելու համար: Ծախսվում է դաւառնելու բոլոր նշանաւոր վաճառականների մօտ: Մօսկվայում—Բ. ԿԵՕԼԵՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկոլսկայա փողոցում: № 8. II. K. O. (1—3)

Societa Generale italiana di Navigazione.

117 ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՄԵԾ ՇՈԳԵՆԱԽԵՐ ՈՒՆԵՑՈՂ

ԻՏԱԼԻԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Կանոնաւոր երթևեկութիւն Բաթումի և Եւրօպայի, Աֆրիկայի, Ասիայի ու Ամէրիկայի բոլոր գլխաւոր նաւահանգիստների մէջ: Շոգենաւերը Բաթումից դուրս են դաշխ կանոնաւորապէս ամեն շաբաթ:

1,500 տոննա ունեցող շոգենաւերը Բաթումից դուրս են դաշխ ամեն երեքշաբթի օր դէպի Անատոլիայի բոլոր գծերը և Կ. Պօլիս:

Բոլոր տեղեկութիւնների մասին (թէ ճանապարհորդների և թէ ապրանքների մասին) զիմեք ընկերութեան գործակալ Ի. Է. ՉԵՐՐՈՒՏԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ—Գօլովինսկի պրօսպ. № 34 և ԲԱԹՈՒՄՈՒՄ—Իշխ. Գուրիէլի տանը:

22—40

НОВАЯ ГОСТИНИЦА ВЪ ВАРШАВѢ

31. Дзугая улица 31.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ

ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, Դուրապ փողոց, 31. Գտնվում է քաղաքի նոյն իսկ ԱՌԵՏՐԱԿԱՆ կենտրոնում, ԹԱՏՐՈՆԵՐԻ և բոլոր ՊԱՇՏՈՆԱՏԵՂԵՐԻ կողքին: 90 սենեակներ, շքեղ կերպով յարմարեցրած, 30 կօպէկից մինչև 3 ռուբլի օրական վարձով:

ԿՕՆԴԻՏԵՐԻԱ և ՐԷՍՏՈՐԱՆ

Ճաշեր 30 կօպէկից մինչև 1 ռուբլի: ՕՄԵՐՈՒՄՆԵՐ և ԿԱՌՔԵՐ երկաթուղու բոլոր գնացքների համար: ԿԱՌՔԵՐԻ վարձերը չափաւոր գներով:

(2)

ЗУБНАЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЪ

ПОДОЛЬСКИЯ ЗУБНЫЯ КАПЛИ

ГИГИЕНИЧЕСКІЙ КОКАИНОВЫЙ ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ

ГИГИЕНИЧЕСКІЙ ЗУБН. ПОРОШОКЪ

СКЛАДЪ ВО ВСѢХЪ АПТЕКАХЪ И АПТЕК. МАГАЗ.

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԵԽԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄԵՐԻ ՑԱԽԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԵՄ

ՊՐՈՎԻԶՈՐ ԱՏԱՄԵՐԻ ԿԱԹԻՆԵՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕՎԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄԵՐԻ ԷԼԻԿՍԻՐ ՄԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄԵՐԻ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ

Российское Общество Застрахованія капиталовъ и доходовъ

УТВЕРЖД. ВЪ 1835 ГОДУ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ

Ռուսաց ընկերութիւն կապիտալների և եկամուտների ապահովութեան հիմնված 1835 թվին

Ամենահին և միակ ռուսաց ընկերութիւն, որը բացառապէս պարագայում է կենսի (կապիտալների և եկամուտների) ապահովութեան դրժով, փոխադարձութեան սկզբունքների վրա:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱՄԱԳՆՈՒՄ 8,000,000 ՐՈՒԲԼԻ

- Կապիտալների ապահովութիւնը ժԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ համար, ապահովացնողի մահուան դէպքում:
- Կապիտալների ապահովութիւնը ԾԵՐՈՒԹԻՒՆԸ և երկխանների համար ԲԱԺԻՆՔԸ ապահովացնելու համար:
- Եկամուտների և ցմա նշանակվող ԹՈՇԱԿՆԵՐԻ ապահովութիւնը:

Տարիները և մանրամասն տեղեկութիւնները ուղարկվում են անվարձ ԳԼԽՈՐ ԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԹԵԱՆ կողմից, որը գտնվում է Թիֆլիսում, Վելիամինովսկայա փողոց, տուն № 24. Գլխաւոր Ագէնտ և Տեսուչ Կովկասեան երկրի համար՝ Ն. Ն. ԳՐՈՒԶԵՆԲԵՐԳ:

ՊԱՀԱՆՁՎՈՒՄ ԵՆ ԱԳԻՆՏՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

Թիֆլիսի և Կովկասեան ուրիշ քաղաքների համար 17—32 (2)

ԳԼԽՈՐ ՊԱՀԵՍ. ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կովկասեան գեղավաճառատան և պ. պ. Շահպարտեանցի, Մակկէրի, Սէնչիկովսկու և Ալմուրօվի գեղատներում: ԲԱԳՈՒԻ ՄԵՋ, Բէկկէրի մօտ, ԳՈՒԹԱՑԻՍՈՒՄ՝ Կօկչեվի մօտ, ԱՏԱՎՐՈՊՈԼԻՄ Բրօնսօցկու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՈՂԱՐՈՒՄ:

(2.)

Լոյս տեսաւ

ՍԱՄՈՒԷԼ ՍՄԱՅԼՍ

„ԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ“

Գերմ. թարգմանեց ֆրիդպոս Վարդանեան: Գինն է 1 ռ. 50 կօպ.

Նոյն թարգմանողի

ՇՄԻՏԹ,	Բենիամին Ֆրանկլին, 2-դ տիպ.	—	Ր. 40 կ.
”	Գէորգ Վաշինգտոն, 2 տիպ.	—	” 60 ”
”	Հոմերի Իլիականը, պատկերազարդ	1	” — ”
”	Հոմերի Ոդիսականը, պատկերազարդ	1	” 20 ”

(Ճանապարհի ծախսը թարգմանչի վրա է): Վաճառվում են թարգմանչի մօտ՝

Тифлисъ, Садовая, Маринно-Апановское училище.

4—4

ԿԵՐՈՍԻՆԻ ՊԱՀԵՍ ՄԵԾ ԳԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԴԵՊՈ ԼԱՄՊԱՆԵՐԻ ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ԵՒ ՄԷԲԷԼԻ

Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ

գտնվում է Վօկչայի մօտ, Կասպեան-ՍԷՏՈՎԻ նաւթարդինագործական ընկերութեան պահեստում, նախկին Կարալիովի

ԿԵՐՈՍԻՆԻ ԵՒ ՄԱՋՈՒՏԻ ՎԱՋԱՌՈՒՄԵՆ ՄԵԾ ԳԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

21—25 (2)

ՊԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Գինն է 15 կօպէկ: Վաճառվում է ԲԱԳՈՒՆ Տիգրան ՂՈՆԴԱԳԱՍՏԵԱՆԻ մօտ, ՇՈՒՇԻՆ Անդրեաս ԱՐԱՀԱՍԵԱՆԻ մօտ:

8—8